3) Թանգարան–Դրադարանի վարելու գործը յանձնում է Հայաստանի Ազգագրական–Մարդաբանական ընկերութեանը, Հայաստանի Հանրապետութեան Հանրային կրթութեան և Արուեստի Նախարարի վերահսկողութեան տակ և նրա կողմից հաստատուած առանձին կանոնագրութեամբ:

(Հաստատուած է 1919թ. սեպտ. 9–ին.)

2. Ֆինանսական նախահաշիւների և պետական ելևմտացոյց կազմելու, քննելու և հաստատելու մասին. — 1) 1920թ. ելևմտական տարին հաշուել նոյն տարուայ յունուարի մէկից:

2) Նախարարութիւնների և պետական վերահսկողութեան ելևմուտքի նախահաշիւների նախագծերը միաժամանակ ուղարկուում են Ֆինանսների նախարարութեան եօթն օրինակ և պետական վերահսկողութեան մի օրինակ 1919թ. նոյեմբեր 10–ից ոչ ուշ:

3) Պարլամենտի և նրա գիւանի պահպանման համար բացուած վարկերը մտցուում են նախահաշուի մէջ նախագահութեան ներկայացրած գումարների համաձայն:

4) Իւրաքանչիւր նախարարութեան և պետական վերահսկողութեան նախահաշուի նախագիծը նախօրօք քննութեան է առնում նախահաշիւները քննող Միջվարչական Յանձնաժողովը, որ կազմուում է համապատասխան նախարարութեան, Ֆինանսների նախարարութեան և պետական վերահսկողութեան ներկայացուցիչներից:

5. Յանձնաժողովի անդամների թիւը որոշուում է յիշեալ վարչութիւնների համաձայնութեամբ:

6. Նախահաշիւները քննող միջվարչական յանձնաժողովի նախագահը նշանակուում է Ֆինանսների նախարարի կողմից:

7. Նախահաշուային այն ենթադրութիւնները, որոնց մասին տարաձայնութիւն չի ծագում նախահաշիւները քննող յանձնաժողովի մէջ, համարուում են հաւանութիւն գտած այդ նախարարութեան նախահաշուի նախագծի մէջ մուծելու համար:

8. Մագած տարաձայնութիւնների մասին յիշուած երեք վարչութիւնների ներկայացուցիչները զեկուցում են իրենց իշխանութիւններին: Եթէ վերջիններս չեն համաձայնում, նրանցից իւրաքանչիւրի եզրակացութիւնը կցուում է նախահաշուի նախագծին:

9. Նախահաշուային յանձնաժողովի քննած նախահաշիւների նախագծերը տարաձայնութիւն առաջ բերող հարցերի մասին մտցրած եզրակացութիւնների հետ միասին ուղարկուում են Ֆինանսական նախարարութեան միջոցով Նախարարների Խորհրդին ոչ ուշ քան 1918թ. նոյեմբերի 20–ը:

10. Նախարարների Խորհուրդը քննելով նախահաշիւների նախագիծը և լուծելով վիճելի հարցերն ու նախագծին իր հաւանութիւնը տալով, 1919թ. դեկտեմբերի 1–ից ոչ ուշ, վերադարձնում է Ֆինանսների նախարարին պետական ելևմտացոյցի նախագիծը կազմելու համար:

11. Ֆինանսական նախարարը Նախարարների Խորհրդին է ներկայացնում պետական ելևմտացոյցը ոչ ուշ, քան 1919թ. դեկտեմբերի 15–ը:

12. Նախարարների Խորհրդի կողմից հաւանութիւն գտած պետական ելևմտացոյցի նախագիծը հրատարակուում է անմիջապէս և ոչ ուշ, քան 1919 թ. դեկտեմբերի 20–ը առաջարկում Հայաստանի Պարլամենտի քննութեան:

13. Հայաստանի Պարլամենտի կողմից հաստատուելուց յետոյ պետական ելևմտացոյցը հրատարակուում է 10 օրուայ ընթացքում:

(Հաստատուած է 1919թ. նոյեմբ. 17–ին)